

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ
Ա ՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ-ՊՏՂԱԲՈՒԹԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Դաշենու Ե. ՄԱՎԱՒՅՅԱՆ

ԱՅՈՒԳՎԱՌ Է 1961 թ.

ԽԱՂՈՂԻ ԵՎ ՊՏՂԱՏՈՒ
ԱՅԳԻՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

7548

A 2787

ՀԱՅՊԵՏՀԱՏ
ԵՐԵՎԱՆ 1946



634.8:631.8

Մ-91

Մեր ուսպութիկայի այգիների տարածության ընդարձակման հետ միասին հրանայական անհրաժեշտություն է նաև նրանց բերքատվության պրոգրեսիվ բարձրացումը։ Մեզ մոտ կատարված փոքրաթիվ փորձերն ու դիտողությունները, ինչպես նաև այլ երկրների բազմաթիվ փորձերը ցույց են տվել, որ արագությամբ կարելի է բարձրացնել այգիների բերքատվությունը և նրան կայուն վիճակ տալ այն ժամանակ, երբ այգու ագրոտեխնիկական ընդհանուր մակարդակի բարձրացման հետ մեկտեղ կատարվում է նաև պարարտացում՝ տեղական ու հանքային պարարտանյութերով։

Կինելով բազմամյա կուլտուրաներ՝ խաղողի վազը և պտղատու ծառերն իրենց արմատներով կարողանում են հասնել մինչև հողի ավելի խորը շերտերը և օգտագործել այնտեղ գտնվող ջուրն ու սննդանյութերը, սակայն քանի որ այդ բույսերը տասնյակ տարիներով ապրում են նույն հողի վրա՝ նրանք բավական արագությամբ սպառում են հողի սննդանյութերը, որից և բերքատվությունը նվազում է։ Ահա այդ դրության դեմ պայքարելու արմատական միջոցներից մեկն է այդու հողերի սիստեմատիկ պարարտացումը։

Ընդհանրապես ՍՍՌՄ-ում և մասնավորապես մեր ռեսպուբլիկայում զարդացող քիմիական արդյունաբերությունը այժմ լանից արդեն հանքային պարարտանյութեր է տրամադրում նաև այգիների հողերը պարարտացնելու համար։

ԱՅԳԻՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐՈՎ

Տեղական ամեն տեսակի պարարտանյութերով կարելի է պարարտացնել այգիները, սակայն մեր ռեսպուբլիկական համար որպես հիմնական և լավագույն պարարտանյութ պետք է նկատի ունենալ գոմաղբը. ըստ հնարավորության պետք է կիրառել նաև կանաչ պարարտացումը: Այդիների համար լավ պարարտանյութ է համարվում նաև մոխիրը:

1. Ինչ որակի գոմաղբով պետք է պարարտացնել այգիները.—Թարմ կամ չքայքայկած գոմաղբով պարարտացումն առհասարակ վատ է, դա վատ է հատկապես ալգիների համար, քանի որ այդ որակի գոմաղբով կատարած պարարտացումը, նամանավանդ գարնանային պարարտացումը, մեծ մասամբ իջեցնում է բերքի և քա-

նակը, և՝ որակը։ Զքայքալված թարմ գումաղբը ալզին վարակում է նաև մոլախոտերով։ Գարնան այգեփորի ժամանակ այդիները պարարտացնելու համար պետք է ընտրել և տեղափոխել միայն լավ քայքայված, հեշտ քրքրվող, բահով կտրտվող գոմաղբը։ Նա պետք է իր բոլոր մասերով միատեսակ գորշ տեսք ունենա, ալդ որակի գոմաղբը ստացվում է այն ժամանակ, երբ գոմաղբի կույտը աշնանից կամ ձմեռվա կեսերից խնամքով դարսված է ջրից պաշտպանված հատակի վրա, լավ պնդացված է, անձրևի և այլ ջրերից չի լվացվել կամ արևի անմիջական ճառագայթների ազդեցության տակ մնալով չի չորացել։

2. Որքան գոմաղբ պետք է տալ մեկ նեկտար այգուն եվ ինչպես անել, որ նա հավասարապես բաշխվի.— Գոմաղբով պարարտացումը պետք է կատարել այն այգինե-

բում, որոնք թույլ աճեցողություն ունեն, հողն աղքատ է սննդանյութերով և այդ պատճառով բերքատվությունը ցածր է: Նորատունկ այգիները, որոնք գեռես լրիվ պաղաքերության չեն եկել և թույլ են աճում, գոմաղբով պարարտացվելու ավելի շատ կարիք ունեն: Քանի որ գոմաղբի պարարտացնող ազդեցությունը շարունակվում է նաև երկրորդ և հետագա տարիներում, այդ պատճառով էլ գոմաղբի նորման որոշելիս պետք է նկատի ունենալ այդու 2 կամ 3 տարվա պահանջը:

Եթե այգին պարարտացվելու է միայն գոմաղբով, ապա նրա մեկ հեկտարին բավական է տալ 40 – 60 տոնն գոմաղբ: Գոմաղբի այդ քանակը բավական պետք է համարել երեք տարվա համար: Որոշ դեպքերում, հաշվի առնելով տնտեսության հնարավորությունները և հողի առանձնահատ-

կությունը՝ կարելի է պարարտացնել հեկտարը 30—40 տոնն գոմաղբով՝ երկու տարշվա համար։

Տնտեսության մեջ հանքային պարարտանյութեր ունենալու դեպքում և գոմաղբն ավելի խնայողաբար օգտագործելու նպատակով՝ կարելի է գոմաղբի քանակը պակասեցնել ու նրա փոխարեն լրացում կատարել հանքային պարարտանյութերով։ Այդ դեպքում յուրաքանչյուր հեկտարի համար բավական կլինի վերցնել 20 տոնն գոմաղբ, որի հետ միաժամանակ պետք է դործադրել 250 կգր. ցիանամիդ և մինչեւ 400 կգր. սուպերֆոսֆատ։

Գոմաղբի սահմանված նորման մեկ հեկտար տարածության վրա հավասարապես տարածելու համար պետք է դեկավարշվել հետևյալ հաշվումներով.—ընդունելով, որ գոմաղբ տեղափոխող սայլի բեռը կես

տոնն է, իսկ այդու միջարքային տարածությունը՝ 2,5 մետր, ապա մեկ սայլի բեռը բավական կլինի միջարքային հետեւյալ տարածության համար՝

<i>Մեկ հեկտարին տրվե-</i>	<i>Մեկ սայլի բեռը</i>
<i>լիք գոմաղբը</i>	<i>ցըել</i>

60 տոնն	33 մետրի վրա
50 "	40 "
40 "	50 "
30 "	66 "
20 "	100 "
10 "	200 "

Եթե գոմաղբի հետ միասին պետք է գործադրել նաև ցիանամիդ պարարտանյութը՝ ապա վերջինս պետք է շաղ տալ գոմաղբից անկախ, այսինքն, նրանից առաջ կամ հետո, սակայն որպես կանոն՝ այդեփորի ժամանակ: Սուպերֆոսֆատը կարելի է խառնել գոմաղբի հետ: Արգելվում է ցիա-

Նամիդ կալցիում պարարտանյութը խառնել սուպերֆոսֆատի հետ:

Պտղատու այգիները եթե պարարտացվելու են համատարած կերպով, ապա նրանց վերաբերյալ պետք է դեկավարվել վերևում նշված նորմաներով և կանոններով: Եթե այգին համատարած կերպով չի պարարտացվելու, այլ պարարտացվելու է միայն ծառերի շրջապատի հողը («չաշկա»), ապա այդ դեպքում մեկ սայլի բեռ գոմաղբը (կես տոնն) տարածել հետեւյալ թվով ծառերի շուրջը:

Ծառերի սաղարթի շառավիղը.	1 հեկտ. ստհմանված նորմա		
	20 տ.	40 տ.	60 տ. գոմաղբ
1 մետր	80 ծառ	40 ծառ	27 ծառ
2 »	20 »	10 »	7 » .
3 »	9 »	5 »	3 »
4 »	5 »	3 »	2 »
5 »	3 »	1,5 »	1 »

Այդիների պարագացման համար մեծ հա-
ջողությամբ կարելի է օգտագործել նաև
տեղական այլ պարարտանյութերը — ինչ-
պես օրինակ, «գիշերային ոսկին», զանա-
զան կոմպոստներ՝ լուրաքանչյուր հեկտարին
վերցնելով գոմաղբի նորմալի կեսը:

3. Գոմաղբը երբ ՏԵՂԱՓՈԽԵԼ այդի
եվ ինչպես կատարել պարաբացումը. — Քա-
նի որ այդիների պարարտացման աշխա-
տանքները կատարվելու են գարնանը այ-
դեփորի աշխատանքների հետ միաժամա-
նակ, այդ պատճառով ել գոմաղբը լավ կը-
լինի այդի տեղափոխել հենց այդ օրերում.
Իսկ այն դեպքում երբ այդին փորվելու է
աշնանը, պարարտացումն էլ պետք է կա-
տարել աշնանը:

Երբ գոմաղբի տեղափոխումը գոմաղբ-
ամբարից դեպի այդի կատարվում է ձմեռվա-
ամիսներին, ապա գոմաղբը չպետք է փը-

ոել ալգում կամ թողնել վոքը կույտերով,
այլ պետք է դարսել մեծ կույտով այգու
կենտրոնում մի հարմար տեղ, ամրացված
և ուղղված հատակի վրա, լավ պնդացնել,
երեսը ծածկել ծղոտով կամ հողով և չբա-
նալ մինչև ալգեփորի օրը:

Ալգեփորի օրը գոմաղբը պետք է շաղ
տալ ալգու միջարքային տարածություն-
ներում կամ թմբերի լանջերին ու թմբերի
միջև և նույն օրն իսկ փորել այդին, կամ
վարել՝ գոմաղբը շուռ տալով հողի տակ:
Չպետք է մոռանալ, որ գոմաղբով պարար-
տացրած այգու փորելու աշխատանքների
լուրաքանչյուր օրվա ուշացումը նվազեց-
նում է գոմաղբի ազդեցությունը, գոմաղբը
փռված վիճակում հողի երեսին 1—2 օր
մնալով՝ կորցնում է իր պարարտացնող
հատկության 50 տոկոսը: Ալգեփորի աշ-
խատանքներին գուգընթաց նույն օրը ա-

ևանձին աշխատողներ պետք է կատարեն այս
գու պարարտացման աշխատանքները, դրա-
նից անմիջապես հետո պետք է փորվի այ-
դին: Բրիգադիրը այնպես պետք է կազմա-
կերպի աշխատանքը, որ յուրաքանչյուր օր
պարարտացվի այդու այնպիսի տարածու-
թուն (կամ այն թվով պողատու ծառերի
բներ), որը փորվելու է նույն օրը: Նույնը
պետք է ասել սովխոզների մասին, ուր
լարավին սիստեմի այգիներում, ինչպես
նաև պտղատու այգիներում այգեփորը, հե-
տևաբար նաև պարարտանյութ հողի տակ
մտցնելը, կատարվում է ձեքենաների օգ-
նությամբ:

Գոմաղբը պետք է վերցնել հողի տակ
այն խորությամբ, ինչ խորությամբ որ
փորվում է այգին, պետք է հետևել որ
թեթև ավագալին հող ունեցող այգինե-
րում գոմաղբը ավելի խոր շերտի վրա տա-
րածվի (25—30 սմ):

Պետք է խստորեն հետեւիլ, որ մեկ
հեկտարի համար սահմանված գոմաղբի նոր-
ման հավասարապես շաղ տրվի ամբողջ
հեկտարի վրա, չպետք է մոռանալ, որ ան-
հավասար պարարտացման դեպքում շատ
անգամ ընդհանուր բերքը պակառում է:

Չպետք է մոռանալ նաև, որ այգինե-
րի պարարտացումը ոչ մի արդյունք չի
տա, եթե նրա հետ մեկտեղ չկատարվի ո-
րակով այգեփոր և եթե այգին չքաղհանվի:
Վատ կատարված այգեփորը չի ապահո-
վում պարարտանյութի ներթափանցումը
հարկավոր խորության վրա և չի պահպա-
նում հարկավոր խոնավությունը հողում:
Լավ պարարտացրած, բայց վատ քաղհան-
ված այգիներում մոլախոտերն այնքան
առատ են աճում, որ խեղդում են վազը
և բերքն իջեցնում:

ՄՈԽԻՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԼԱՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ
Է ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այգիների բերքատվությունը բարձրացնելու, ինչպես նաև բերքի որակը լավացնելու համար կարևոր նշանակություն ունի նաև մոխրով կատարվող պարարտացումը։ Մոխիրը պարունակում է բույսի մննդառության համար անհրաժեշտ հանքային բոլոր տարրերը, նրա մեջ պակասում է միայն ազոտը։ Մեր այգիներում մոխրով կատարված պարարտացումը մեծ մասամբ արդյունք չի տալիս միայն այն ժամանակ, եթե նա գործադրվում է առանձին, առանց մյուս պարարտանյութերի և առանց այլու բերքատվությունը բարձրացնող մյուս միջոցառումները կոմպլիքսորեն կիրառելու։

Այգիները եթե պարարտացվում են գոմաղբի լրիվ նորմայով (40—60 տոնն հեկ-

տարին), ապա մոխրով պարարտացնելու
կարիք չի լինում: Հեկտարին 20 տ. գո-
մաղբի հետ կարելի է դործադրել 0,5-ից
մինչև 1,0 տոնն մոխրը: Մոխրը չպետք
է խառնել գոմաղբի կույտին, այլ պետք
է այն առանձին տեղափոխել և շաղ տալ
այգու վրա: Մոխրով պարարտացումը կա-
րելի է կատարել նաև աշնանը, այդեթևաղի
ժամանակ կամ գարնանը՝ այգեբացի ժա-
մանակ:

Կանաչ պարարտացումը (սիդերացի-
ան) մեր ռեսպուբլիկայի պտղատու և խա-
ղողի ալգիների բերքատվությունը բարձ-
րացնելու հզոր միջոց է լինելու: Կանաչ
պարարտացման միջոցով այգու հողը հա-
րստանում է և օրգանական նյութերով
(նումուսով) և աղոտով. այդ պայմաններում
ուժեղանում են ծառերը և նրանց բերքն
ավելի քան կը կնապատկվում է: Հատկա-

պես պտղաբուծական ու խաղողագործական խոշոր սովխոզների այգիներում հնարավորություն կա կանաչ պարարտացումը կատարելու, շնորիվ այն բանի, որ այդ տեղերում պարարտացման հետ կապված աշխատանքները կարելի է մեքենալացման ենթարկել:

Մեր ռեսպուբլիկայի այգիներում, որպես կանաչ պարարտացման բույս՝ կարելի է վերցնել շամբալան կամ մաշի տեղական վաղահաս տեսակները:

Այգին փորել գարնանը սովորական այգեփորի կանոններով, կատարել 1—2 քաղհան (պահել մաքուր ցել վիճակում) մինչև ամառվա կեսը՝ հուլիս ամիսը. հուլիսի մեջ հողը կուլտիվատորով թեթև վարել ու ցանել կանաչ պարարտացման բույսը, ջրել ըստ պահանջի: Այդ պայմաններում բույսը կդարձանա վեգետացիոն շըր-

ջանի Զ-ըդ կիսում. Երբ նա աշնան ընթացքում կծաղկի և երբ կսկսվեն կազմվել առաջին պատիճները, այդ ժամանակ պետք է հողը գութանով վարել և կանաչ պարարտացման բույր վերցնել հողի տակ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս ձևով մշակված այգին հաջորդ դարնանը կարիք չի լինի փորել: Պարզ է, որ նման պարարտացումից այգին արդիունք կտա հաջորդ տարում, երբ վազը կամ ծառը կստանականաչ պարարտանյութի ազոտը:*)

ԱՅԳԻՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀՍՍՌ-ի ալգեգործական շրջաններին

*) Տեղական պարարտանյութերի և նրանց ռացիոնալ օգտագործման խնդիրների մասին հանձնարարվում է կարդալ Ե. Մովսիսյանի «Տեղական պարարտանյութերն ու նրանց օգտագործումը» աշխատությունը:

1945 թվից սկսած տրվում են հանքային
պարարտանյութեր, գլխավորապես սուպեր-
ֆոսֆատ և ցիանամիդ. սրանցից առաջինը
ֆոսֆորական պարարտանյութ է, իսկ երկ-
րորդը՝ ազոտական։ Կարող են օգտագործ-
վել նաև ազոտական այլ պարարտանյու-
թեր, օրինակ՝ ամոնիում սուլֆատ կամ ա-
մոնիում նիտրատ, եթե ալգակախն կա տըն-
տեսությունում։ Դաշտային կուլտուրա-
ների հետ կատարված փորձերը, որոշ չա-
փով նաև խաղողի այգիների պարարտաց-
ման փորձերը ցույց են տվել, որ այս եր-
կու տիպի պարարտանյութերը (ազոտական
և ֆոսֆորական) նպատակահարմար է օգտա-
գործել միաժամանակ, իրար հետ միասին.
մեկն առանց մյուսի չի կարող լրիվ ազ-
դեցություն ունենալ, ընդհակառակը, եր-
կուսը միասին օգտագործելով՝ մեկը լրաց-

նում է մյուսին, և ընդհանուր արդյունքն
ավելի մեծ է լինում:

Այդ պարարտանյութերն այգեզործու-
թան մեջ պետք է օգտագործել հետեւյալ
ձեփով՝

1. Բոլոր այգիների պարարտացման
նորման միանույնը չի կարող լինել, որ-
պես կանոն՝ պետք է զիտենալ, որ սնըն-
դանյութերով հարուստ հող ունեցո՞ղ ար-
դիները, որոնցում վազի աճեցողությունը
ուժեղ է և բերքատվությունն ել՝ բարձր,
կարելի է ազոտական պարարտանյութ (ցի-
անամիդ) ավելի քիչ չափով վերցնել, իսկ
սուպերֆոսֆատ՝ ավելի մեծ չափով, որպեսզի
բարձր բերքի հետ ապահովվի նաև բերքի
որակը։ Այդ դեպքում 1 հեկտար ալգուն
պետք է տալ 300 կգ. ցիանամիդ և 600 կգ
սուպերֆոսֆատ։

2. Մննդանյութերից աղքատ, ավազոտ

հող ունեցող այգիները, որոնցում վազի
աճեցողությունը թույլ է և բերքատվու-
թյունը՝ պակաս պետք է վերցնել ազո-
տական պարարտանյութի որոշ գերակըշ-
ություն սուպերֆուֆատի նկատմամբ:
Այդ դեպքում 1 հեկտար այգուն պետք է
սահմանել 600 կգ. ցիանամիդ և 400 կգ.
սուպերֆուֆատ:

3. Մյուս այգիները, որոնք միջակ
դրության մեջ են գտնվում թե վազի
աճեցողությամբ և թե բերքատվությամբ,
պետք է պարարտացվեն ազոտական և ֆոս-
ֆորական պարարտանյութերի հավասար
քանակներով: Այդ դեպքում մեկ հեկտա-
րին հարկավոր է տալ 500 կգ. ցիանամիդ
և 500 կգ. սուպերֆուֆատ:

4. Երիտասարդ, դեռևս նոր պտղաբե-
րության եկած այգիները պարարտացնե-
լիս՝ դեկավարվել վազերի աճեցողության

դրությամբ, և պարարտացման միջոցով
նպատակ դնել ուժեղացնելու թույլ ալգինե-
րի աճը և արագացնել լրիվ պտղաբերու-
թյան հասնելու ժամանակամիջոցը։ Պետք
է իմանալ որ ցիանամիզը և լավորակ գո-
մաղը մեծ չափով նպաստում են աճեցո-
ղությանը, իսկ սուպերֆուֆատն ու երեմն
նաև կալիական պարարտանալութերը (նաև
մոխիրը) արագացնում են հասունացումը։

5. Այն դեպքում, եթե այգին պարար-
տացվում է և՛ գոմաղը, և՛ հանքային պա-
րարտանալութերով, պետք է դեկավարվել
հետեւյալով։ 1 հեկտարին տալ 20 տոնն
գոմաղը և սուպերֆուֆատի ու ցիանամիզի
վերեւում հիշված նորմաների կես չափը՝
հաշվի առնելով այգու դրությունը։

6. Ցիանամիզից և սուպերֆուֆատից
բացի, տնտեսությունում եթե կա նաև
լավ մոխիր ապա գլուղատնտեսի խորհր-

դով կարելի է վերոհիշյալ տարածություն-ներին ավելացնել նաև մոխիզ, բայց մեկ հեկտարին ոչ ավելի քան 1 տոնն:

7. Մոխիրը և հանքային պարարտա-նյութերը՝ հատկապես ցիանամիգը՝ շաղ տա-լուց առաջ հատուկ ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ դրանք մեծ կոշտերով չընկնեն հողի մեջ և չթափվեն վազի բնին շատ մոտիկ, ինչպես նաև՝ ընձլուզների ու նոր բացվող բողբոջների վրա։ Հանքային պարարտանյութերը եթե կոշտացած են, նրանց նախապես պետք է մանրացնել մինչև սիսեռի հատիկների մեծության և ալղակես միայն շաղ տալ։ Շատ հին, թըրշ-ված ու կոշտերի վերածված ցիանամիգով չպարարտացնել այդիները։

8. Պարարտանյութերը շաղ տալ միշ-շարքային ամբողջ տարածության վրա հա-վասարապես, իսկ թմբալին սիստեմի հին

այգիներում՝ թմբերի լանջերին ու միջ-
թըմբային տարածության վրա։ Թմբերի
դագաթները, ինչպես նաև լարային սիս-
տեմի այգիներում վազի բնին անմիջապես
մոտիկ պարարտացումն ավելորդ, երբեմն
նույնիսկ վտանգավոր է վազի համար։

9. Պարարտացրած այգին այնունետեղ
փորել կամ վարել սովորական այգեփորի
կանոններին համապատասխան։ սակայն
պետք է ձգտել որքան կարելի է կարճ ժա-
մանակամիջոցում փորել պարարտացրած
բոլոր այգիները։ Որքան խորը փորվի պա-
րարտացրած այգին, առանց սակայն վա-
զի արմատներին վնասելու՝ այնքան բար-
ձըր կլինի պարարտանյութի ազդեցու-
թյունը։

10. Սուպերֆոսֆատն ու ցիանամիղը ոչ
մի դեպքում չպետք է իրար հետ խառնել
ոչ միայն նրանց պահեստում պահելիս կամ

տեղափոխելիս, այլ նույնիսկ դաշտում հո-
ղի երեսին շաղ տալիս։ Այդ երկու նյու-
թերն իրար հետ շփվելիս փչանում են,
տուժում է հատկապես սուպերֆուֆատը,
նա վերածվում է բույսերի համար անմատ-
չելի դրության։

11. Այդ պարարտանյութերը պահես-
տում պահելիս կամ տեղափոխելիս ամեն
կերպ պետք է պաշտպանել խոնավությու-
նից, հատկապես անձրևից, որովհետև
թրջվելիս այդ պարարտանյութերը կորց-
նում են իրենց պարարտացնող ազդեցու-
թյունը։ Հատկապես ցիանամիզը արագու-
թյամբ փչանում է և թունավոր հատկու-
թյուն է ձեռք բերում ավելորդ խոնավու-
թյունից։ Նրա պահեստն առանձնապես չոր
պետք է լինի։

12. Պարարտանյութերը տեղափոխե-
լու սայլերը կամ ավտոտրանսպորտը պետք

է հատուկ խնամքով ամրացված լինեն—
կոտրված տախտակներ, լայն անցքեր չը-
պետք է ունենան, որպեսզի տեղափոխու-
թյան ժամանակ ոչ մի կորուստ չլինի:


13. Ալգիների համար հարկավոր քանա-
կով պարարտանյութը պետք է նախօրոք
առանձնացնել, այդ պարարտանյութերի
բաշխումն ըստ այգեգործական բրիգադնե-
րի և ըստ այգիների պետք է կատարել
կոլխոզի վարչության որոշումով՝ հիմնվե-
լով մասնագետի ցուցմունքների վրա:

14. Պարարտանյութերի բացթողումը
պահեստից կատարել ըստ այդ պլանի:
Բրիգադիրն անձամբ պատասխանատու է
ստացած պարարտանյութին՝ անկորուստ և
խակական նպատակին օկտագործելու հա-
մար:

Պատ. խմբագիր՝ Զ. Ա. Բեծանյան

ՎՃ 01372 Պատվիր 107. Տիրամ 1000. Տպագրական 3/4
մամ. Հեղ. 0,4 մամ. Ստորագրված է տպագր. 25/IV—46 թ.

ՀՅՈՒՄ ՄՅ-ԵՆ կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչ. Ք 1
առաջ. Երևան, 1946.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037151

(34)
2 P.P.

139

A 2787